Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ բաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:
(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Հայկական միջնադարյան ճարտարապետական հորինվածքների թվում առանձնակի տեղ ունեն Հռիփսիմեի տիպի կառույցները: Ճարտարապետական մտքի փայլուն վերելքի արգասիք են դրանք, հայտնի միայն Հայաստանում և Վրաստանում: Այս կարգի հուշարձանների նախօրինակն է VI դարի վերջում կառուցված Ավանի տաճարը: 618 թ. կառուցվում է Հռիփսիմեի տաճարը, որը և օրինակ հանդիսացավ նույն 7-րդ դարում կառուցված մի շարք հուշարձանների համար: Այս կարգի հուշարձաններից է Սիսավանի տաճարը (այժմ Սիսիան շրջանային կենտրոն), որ կառուցված է նույն դարի վերջին քառորդում: Այն մեզ է հասել համեմատաբար լավ պահպանված վիճակում:

Հարավային ճակատ



Արևելյան ճակատ. լուսամուտների պսակներ

Հուշարձանը քառաբսիդ հորինվածք է, պարփակված արտաքին պատերով կազմված ուղղանկյան մեջ: Արևելյան և արևմտյան աբսիդների առջև տեղավորված նախախորանները որոշ ձգվածություն են հաղորդում կառույցին: Նրա կոմպոզիցիոն կենտրոնն է գմբեթատակ քառակուսին, որին չորս հիմնական առանցքներով հպված են աբսիդները: Անկյուններում տեղավորված են 3/4 հենախորշերը: Վերջիններից մուտք է բացվում դեպի անկյունային սենյակները: Տաճարն ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից:

Բոլոր աբսիդներն էլ ունեն երեքական լուսամուտ, որոնցից կողայինները բացվում են հատվածքում եռանկյունաձև լայն և խոր խորշերի մեջ: Գմբեթատակ փոխանցումը իրականացված է անկյունային բոլորաձև հենախորշերից վեր տեղավորված չորս լայնաթռիչք տրոմպների միջոցով, որոնց վրա էլ հենվում է ներսից ութանկյուն, դրսից 12 նիստ ունեցող սլացիկ թմբուկը: Նրա վերին եզրին տեղավորված են ութ, մեկ ամբողջական քարի մեջ փորված փոքր տրոմպները, որոնք և փոխանցում են ստեղծում դեպի գմբեթի հիմքի շրջագիծը:

Տաճարի ներքին տարածությունները մշակված են պարզ ու հստակ ձևերով: Լայնարձակ գմբեթատակ տարածքի եզրամասերում առաջացող ութ հզոր որմնամույթերն էլ իրենց վրա են կրում գմբեթի ամբողջ ծանրությունը: Նշված համամասնությունների ներդաշնակ համախումբն է, որ այնքան տպավորիչ է դարձնում տաճարի քնդարձակ, լուսավոր ներքին տեսքը:

Ինչ վերաբերում է արտաքին ծավալային հորինվածքին, ապա այստեղ գերիշխում են հայկական ճարտարապետու-

Ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից

թյան մեջ դեռևս V—VI դարերում մշակված ավանդական ձևերը։ Բոլոր կողմերում առանձնակի շեշտված են խաչաթևերը, աբսիդներին համապատասխանող հատվածները պակված են ճակատոնապատերով։ Նրանցից աջ և ձախ անկյունային սենյակներին համապատասխանող ավելի ցածրադիր ծածկերն են, թեքությունները ուղղված դեպի հարավ և հյուսիս։ Բոլոր ճակատներն էլ մշակված են բարձր, հատվածքում եռանկյունաձև խորշերով, իսկ տանիքը կազմող խաչաթևերի հատման տեղում բարձրացող գմբեթատակ քառակուսու վրա էլ հենվում է արտաքինից 12 նիստ ունեցող թմբուկը։ Այն շրջանցում է զույգ որմնասյուների վրա հենվող դեկորատիվ կամարաշարը, և թմբուկի նիստերը պակում է ուժեղ ելուստ ունեցող հյուսված զարդարաձևերով մշակված քիվը։ Թմբուկի լուսամուտները տեղավորված են գլխավոր առանցքներին համապատասխանող նիստերի վրա և ընդամենը չորսն են։ Միայն նման լուծման դեպքում հնարավոր էր համակերպել ներսի ութանիստը դրսի տասներկու նիստի հետ, ընդ որում արտաքին նիստերի քանակի ավելացումը

Տաճարի գլխավոր աբսիդը



Արևելյան ճակատ



Տրոմպային փոխանցում

Արևմտյան ճակատ. Հովհաննես [redacted]
եկեղեցպանի բարձրաքանդակը



Արձանագրություն տաճարի պատին

անշուշտ թելադրված է եղել դեկորատիվ կամարաշարի ներդաշնակ համաչափություններ ստանալու ձգտումով։ Մյուս կողմից թմբուկի ընդամենը չորս լուսամուտը չէր կարող ապահովել տաճարի անհրաժշտ լուսավորությունը, հանգամանք, որը և ստիպել է, ի տարբերություն նույնատիպ այլ տաճարների, բոլոր աբսիդներում էլ տեղավորել երեքական լուսամուտ։

Մեծ վարպետությամբ է մշակված տաճարի հարդարանքը։ Ներսի որմնասյուների ոլորաձարդ խոյակները, լուսամուտների և խորշերի պակները բոլորն էլ լավ հայտնի են վաղ միջնադարյան դեկորատիվ արվեստում, թեև դրանցից շատերը՝ ինչպես օրինակ նռներով ծածկված պակները խիստ յուրովի են և ուշագրավ։

Սիսավանի տաճարը բավականին հարուստ է այուժետային պատկերաքանդակներով։ Այսպես, հարավային և արևմտյան ճակատների խորշերի վերին անկյուններում առկա են աշխարհիկ մարդկանց դիմաքանդակներ։ Տաճարի արևմտյան պատին տեղավորված է Հովհաննես եկեղեցպանի բարձրաքանդակը, իսկ թմբուկի թիվի վրա, չորս ուղղություններով՝ չորս ավետարանիչների կիսանդրիները։ Սակայն առավել հետաքրքիրը ներսում, փոքր տրոմպների մեջ տեղավորված դիմաքանդակներն են, որոնք համեմատաբար լավ են պահպանվել և ունեն մակագրություններ։

Հյուսիս-արևելյան փոքր տրոմպի մեջ պատկերված է Սյունյաց տեր Կոհազատ իշխանը, նրանից ձախ Թեոդորոս վանականը, իսկ դեպի աջ՝ Սյունյաց Հովսեփ Ա. եպիսկոպոսը։ Դիմաքանդակներն ունեն ակնհայտ կտիտորական բնույթ, այստեղ պատկերված են այն անձինք, ովքեր հիմնադրել են և միջոցներ տրամադրել տաճարի կառուցման համար։ Ա-

ռանձնապես տպավորիչ է և Կոհազատ իշխանի դիմաքանդակը. արտահայտիչ են նրա նշանձև աչքերը, յուրովի, ոչ կանոնիկ դիմագծերը։ Քանդակագործը արել է ամեն ինչ պորտրետային նմանության հասնելու համար։ Կոհազատ իշխանի մասին ոչինչ չեն գրում պատմիչները, սակայն լավ հայտնի է Սյունյաց Հովսեփ Ա. եպիսկոպոսի կառավարման ժամանակը (670—689), հանգամանք, որը և հնարավորություն է տալիս թվագրել հուշարձանը VII դարի վերջին տասնամյակներով։

Սիսավանի տաճարը մեզ էր հասել թեև ամբողջովին կանգուն, սակայն զգալի վնասվածքներով, 1959—1961 թվականներին վերանորոգվեցին գմբեթը և բոլոր ծածկերը, պատերի առանձին հատվածներ։

Մնացականյան Ստեփան Խաչատուրի

ՍԻՍԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Մասն. խմբագիր՝ Վ. Մ. Հարությունյան
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.։ Ստորագրված է տպագրության 14.07.1987 թ.։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42 պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.։ Պատվեր 778։ Տպաքանակ 10000։ Գինը 15 կոպ.։ ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26։